Նորին Սուրբ Օծություն Տեր-Տեր

Գարեգին Ա

Ամենայն Հայոց կաթողիկոս

Մեծարգո Վեհափառ: Ասելիքս հայ մշակույթի համար կարևորագույն հարց համարելով և գիտենալով, որ այն վերջնականապես Դուք պիտի լուծեք, հարմար համարեցի անմիջականորեն դիմել Ձեզ, ակնկալելով Ձեր անկախ ու իմաստուն վճռի կայացումը:

Զվարթնոցը 640-ական թվականներին կառուցվեց այնտեղ, որտեղ, համաձայն ավանդության, հանդիպել էին ս. Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ արքան: Եվ երբ հայոց մեծանուն կաթողիկոս Ներսես Շինողը կերտեց իր նորաձև տաճարը, այն իրավամբ օծվեց ս. Գրիգոր Լուսավորչի անունով:

Զվարթնոցը հենց սկզբից՝ կառուցումից ի վեր և ողջ միջնադարի ընթացքում տեսնողներին հիացրել էր իր հոյակապ վեհությամբ, գեղեցկությամբ, թողած անջնջելի տպավորությամբ: Այն ճարտարապետական աննախադեպ ստեղծագործություն էր, իր անվանակոչմանն արժանի կոթող:

652 թ. Զվարթնոցի օծման արարողությանը ներկա գտնվելու եկած բյուզանդական Կոստանդին կայսրը հավերժ հիացյալ Զվարթնոցի տեսքով, համաձայն պատմիչ Մովսես Կաղանկատվացու, տուն վերադառնալիս, կարգադրում է իրեն ուղեկցողների հետ Կոստանդնուպոլիս ուղարկել տաճարի ճարտարապետին, որ իր աշխարհահռչակ ս. Սոֆիա տաճարի հարևանությամբ կառուցի Զվարթնոցի կրկնօրինակը ի փառաբանություն կայսեր անվան:

Հայ Բագրատունի թագավորներից Շահնշահ հայոց, վրաց և աղվանից Գագիկ Ա-ն, 11-րդ դարի պատմիչ Ասողիկի վկայությամբ, ջերմ ցանկություն էր հղացել իր մայրաքաղաք Անիում կառուցել նոր միայն կործանված Զվարթնոցի կրկնօրինակը, որը պատիվ պիտի բերեր իրեն և իր տերությանը: Նա իր այդ ցանկությունն իրականություն դարձրեց 1001 թ. (ինչը պիտի հավերժացներ հայոց կողմից քրիստոնեությունը

պետական կրոն հռչակելու 700-ամյակը) և, ինչպես Զվարթնոցը Ներսեսի կողմից, այնպես էլ հիշյալ նորակերտ եկեղեցին օծվեց ս. Գրիգոր Լուսավորչի անունով: Հիշենք, որ ճարտարապետության պատմության մեջ այն անվանվում է նաև Գագկաշեն ի պատիվ նրա կառուցողի:

2001 թ. Հայաստանում քրիստոնեության հաստատման 1700-ամյակը հավերժացնելու համար, ծայրագույն պատրիարք, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն աստվածահաճ որոշում էր հղացել Երևանում կառուցել Արարատյան թեմի Մայր եկեղեցի ս. Գրիգոր Լուսավորչի անունով և դարձյալ Զվարթնոցի ճարտարապետությամբ՝ նրա կրկնօրինակը: Կաթողիկոսի հանձնարարությամբ Մայր աթոռի շինարարական-ճարտարապետական խորհուրդը դեռևս 1989 թ. քննել և հավանություն էր տվել ընդհանուր նախագծին, հանձնարարելով կատարել որոշ լրացումներ, որը և կատարվել էր (արձանագրությունը պետք է որ լինի Աթոռի դիվանում):

Կաթողիկոսի այդ որոշման երկրորդ կողմն այն էր, որ կվերակենդանանար աննման Զվարթոցի պատկերը, որը սակայն այսօր գրեթե ամբողջությամբ կործանված է, որպես Աստծո տաճար այն գոյություն չունի (հիշենք, որ Զվարթնոցը հայ ճարտարապետության այն միակ հուշարձանն է, որ արժանացել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրանցմանը, որպես աշխարհի առավել բարձրակարգ ստեղծագործություններից մեկը):

Այս տրամաբանական գործընթացը ցավալիորեն խանգարվեց ՀՀ նախարարների խորհրդին առընթեր եկեղեցական խորհրդի այն ժամանակվա նախագահ Ս. Վարդանյանի և իր որոշ ոչ ազգային շահերով առաջնորդվող գործընկերների անպատշաճ ջանքերով. կոպտորեն մերժվեց ծայրագույն պատրիարք Վազգեն Ա կաթողիկոսի որոշումը և այժմ նախապատրաստվում է «Գրիգոր Լուսավորիչ» անվամբ եկեղեցին կառուցել ոչ թե Զվարթնոցի ճարտարապետությամբ, այլ մի նոր նախագծով:

Կուզենայի Ձեզ հավաստել, որ վերոհիշյալ նոր նախագիծը, որ պիտի վերջնականապես հաստատվեր Վեհափառի կողմից, նրան ամենևին չէր գոհացրել: Վերջին անգամ, տակավին հիվանդ վիճակում, նրանից «հավանություն» են կորզել Աթոռին

մոտ կանգնած և որոշակի դեր խաղացող արվեստագետներից և ճարտարապետներից ոմանք:

Ձեզ գրելու իմ այս ձեռնարկումը թերևս ուշացած համարվի, սակայն, ինչպես գիտենք, կոնկրետ գործերը նոր են սկսվելու. սխալ է կատարված, պետք է շտկել: Հայաստանում քրիստոնեության հաստատման իրողությունը նշելու առիթով Գրիգոր Լուսավորիչի անվամբ կառուցվելիք եկեղեցիները ավանդաբար եղել են Զվարթնոցի կրկնօրինակը, այժմ այն խախտելու առիթ չպիտի լինի: Այսպիսի հոբելյանների առիթները հաճախ չեն լինում, մյուս անգամ կնշվի 2301 թ., երբ կլրանա 2000-ամյակը: Բանն այն է, որ Զվարթնոցի վերակազմության թորամանյանական նախագիծը, որով ենթադրվում էր կառուցել Երևանի Մայր եկեղեցին, այն վիճակում է, որ շինարարությունը նրանով կարելի է սկսել անմիջապես: Գծագրերի մանրամասնումը կարող է շարունակվել շինարարությանը զուգընթաց: Այդպես հաճախ է լինում. այդպես սկսվեց կառուցվել թամանյանական Օպերայի և բալետի շենքը երեսնական թվականներին:

Նրանք, ովքեր անհամաձայն էին Զվարթնոցը կրկնելուն, պատճառաբանում էին, որ այն փոքր է, 5000 նստատեղով աղոթասրահ չունի: Երբ նրանց բացատրեցին, որ այդ թիվն ընդհանրապես ռեալ չէ, նրանք կամաց-կամաց թիվն իջեցրին մինչև 1500-ի: Այս դեպքում նրանք կարող էին վերադառնալ Զվարթնոցին, քանի որ Զվարթնոցի տարողությունը դրան համապատասխանում է, դեռ ավելին, մոտ 1500-2000 մարդու համար տեղ է մնում աղոթելու ոտնկայս (մեր, և ոչ միայն մեր կարծիքով օպտիմալ չափը կլիներ ոչ ավել 500-800 նստատեղից, ամենաշատը՝ 1000 տեղ նստողների համար): Պետք է նկատել, որ մեր եկեղեցու սրբագործված ավանդույթում շատ նստատեղերը օտար են. հայն իր աղոթքը մրմնջում է ոտնկայս, նա համբերությամբ և սիրով լսում է պատարագը նույնպես ոտնկայս: Թերևս դրանով է պայմանավորված, որ հայկական ոճի կառուցվածքները, ի տարբերություն Արևմուտքի բազիլիկների, ունեն կոմպակտ, ոչ ընդարձակ հատակագծեր, սակայն վերձիգ գմբեթով պսակված աստծո տներ են:

Կա ևս մի շատ կարևոր հանգամանք. այդ այն է, որ Զվարթնոցը շատ ռացիոնալ է լուծված, այն տարողունակ լինելով հանդերձ (ընդհուպ մինչև 4000-5000 մարդ), մեծածավալ չէ. այն թերևս նոր առաջարկվող նախագծի քառորդ ծավալին հավասարվի, այդ նշանակում է նրա կառուցման քառորդ գնով կկառուցվի, ի վերջո կառուցման ավարտը կրկնակի շուտ կլինի:

Հաջորդ և նույնքան կարևոր պետք է համարել այն հանգամանքը, որ տաճարը կառուցելով, մենք միաժամանակ վերակենդանացած ենք տեսնելու հայ շինարարական հանճարի վկայությունը, 7-րդ դարում ստեղծված գլուխգործոցներից այն, որ մեր անձնագիրն է, մեր այցետոմսը աշխարհի ժողովուրդների ընտանիքում:

Հաստատ է մի բան, որ այս վերջին և միակ հնարավորությունն է Զվարթնոցը, այդ չնաշխարհիկ հուշարձանը վերականգնված տեսնելու: Նման առիթ այլևս չենք ունենա:

Նոր նախագծով մի նոր եկեղեցի կառուցելը, դա հերթական շինարարական օբյեկտի իրականացման նշանակություն կունենա և ոչ ավելին:

«Գրիգոր Լուսավորիչը» Զվարթնոցի ճարտարապետությամբ կառուցելը կդիտվի որպես ժողովրդի մի նոր վերածնունդ, նշանակալից երևույթ մեր ողջ պատմության ճանապարհի մեզ հատկացված հատվածում, այն կնշվի և կհիշվի դարերում: Մենք վերականգնեցինք հունա-հռոմեական ճարտարապետությամբ կառուցված Գառնիի հեթանոսական տաճարը, բայց ահա մոռացության տվինք, չմտահոգվեցինք, որոշ վայ հայրենասերների կողմից խանգարվեցինք վերականագնել քրիստոնեական տաճարը՝ մեր ազգային փառքը, որը փուլքերի է վերածվել և քայքայվում է վերջնականապես: Այն տեսակետը, որ մեր օրերի եկեղեցին պիտի կառուցվի ժամանակակից ոճով, կարող է կիրառվել Հայաստանում կառուցվելիք այլ եկեղեցիներում, այս մեկը պետք է թողնել հանուն Զվարթնոցի վերակենդանացման:

Մեծարգո Տեր, հնարավոր եմ համարում խնդրել Ձեզ ընդունել նոր որոշում, այն է, Արարատյան թեմի Մայր եկեղեցին Գրիգոր Լուսավորչի անունով կառուցել Զվարթ-

նոցի ճարտարապետությամբ, համաձայն Թ. Թորամանյանի հանրահայտ անգերազանց վերակազմության նախագծի:

Տիրան Մարության

ՀՀ վաստակավոր շինարար, ճարտարապետության դոկտոր,

ճարտարապետության 1991 թ. համաշխարհային Բիենալեի դափնեկիր

[թերևս 1995 թ.]